

տեղը վերադառնայ ազատություն. ուստի այս ապահովագրովս առանձինն մեր հովանաւորութեան ու պաշտպանութեան ներքեւ կ'առնունք եւ կը դնենք զինքն .

Ասոր համար ալ ձեզի եւ ձեզմէ իւրաքանչիւրին կը հրամայենք ու կը պատուիրենք որ , եւն . . .

Որոց 'ի հաւատս , եւն : Կէս տարւան համար պիտի զօրէ :

Վկայ է Արքայն , առ Ուեսսմիլնսրի , 'ի 24 Հոկտեմբերի :

'Ի ձեռն իսկ Արքայի եւ Ժողովոյն :

Զարմանալի է որ Լեւոն , կարծես խնջոյքի կերթայ , կուղէ որ Լոնդոնի մէջ խմելիք գինին ալ հեալ տանի , չզրկուելու համար ֆրանսական ազնիւ գինիներէն . . . եւ ասոր համար ալ մասնաւոր հրաման կամ արտօնութիւն առնել հարկ եղեր է , ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ « Թղթոց գրքին » մէջ տպուած հետեւեալ պաշտօնագրէն(1) .

Արտագիր գինւոյ՝ յանուն սահարապետի Լեւոնի(2)

ԱՐՔԱՅՆ՝ համօրէն եւ իւրաքանչիւր ծովակալներուն , եւն . , Ողջոյն : Գիացած ըլլաք որ՝

Յովհաննէս Տր Ռուսպ՝ Մեծափառ Իշխանին Լեւոն Հայոց Արքային Տաճարապետը՝ միտք ունենալով մեր թոյլտուութեամբը Ֆրանսայի գինիէն մուծանելու հարիւր յիսուն մար , նոյն իսկ 'ի գործածութիւն Հայոց Թագաւորին՝ որ մեր Անգլիոյ Տէրութեան երկիրը պիտի գայ իւր ծառաներուն ու քովն եղած ուրիշ մարդկանց միջոցաւ ,

Մենք ,

Որպէս զի նոյն Յովհաննէսն եւ կամ իւր յիշեալ սպասաւորներն եւ ուրիշ մարդիկ չըլլայ թէ մեր լիզիոններուն (lige) ոմանց կողմանէ ըստ իմիք մնաս մը կրեն վերոյասացեալ իրաց նկատմամբ ,

Ուզելով 'ի մասինս մասնաւոր հոգ եւ խնամ տանիլ անոնց ապահովութեանը ,

Մեր այս ապահովագրովն առանձինն մեր պաշտպանութեան եւ հովանաւորութեան ներքեւ կ'առնունք նոյն այն Յովհաննէսն եւ իւր ծառաներն եւ ուրիշ մարդիկները՝ նախատացեալ զինիով ու նաւերով եւ ամաններով որոնք զինին կը պարունակեն , մեր Անգլիական Տէրու-

(1) Rymer, Foedera, fs. Գ, մասն Գ, եր. 187 .

(2) Բնագիրը տե՛ս գրիս վերջը՝ Document XIX.